*Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի պետի պժկ Վ. Պետիկյանին*

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի հոկտեմբերի 29-ից մինչև 2025 թվականի հունվարի 29-ը ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի փորձագետ **Ամալյա Ղազարյանի** կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ՝

1) իրականացրել եմ Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումների, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի հրամանների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներ,

2) իրականացրել եմ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և նրան ենթակա պետական մարմինների ստորաբաժանումների կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի (բացառությամբ՝ Նախարարության և նրան ենթակա պետական մարմինների ներքին (լոկալ) և անհատական իրավական ակտերի) իրավական փորձաքննության ենթարկման աշխատանքներ.

3) իրականացրել եմ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և նրան ենթակա պետական մարմինների ստորաբաժանումների կողմից մշակված ներքին (լոկալ) իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ իրավական դիրքորոշման ներկայացման աշխատանքներ.

4) իրականացրել եմ այլ մարմիններից Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կարծիքի ներկայացված Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումների, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի հրամանների և այլ իրավական ակտերի նախագծերի փորձաքննության ենթարկման աշխատանքներ.

5) մասնակցել եմ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և նրան ենթակա պետական մարմինների իրավասությանը վերապահված բնագավառներում կնքվող միջազգային պայմանագրերի նախագծերի մշակման աշխատանքներին.

6) իրականացրել եմ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և նրան ենթակա պետական մարմինների իրավասությանը

վերապահված բնագավառներում իրավական ակտերի կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների ներկայացման աշխատանքներ.

7) իրականացրել եմ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և նրան ենթակա պետական մարմինների կողմից Վարչություն ներկայացված նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հետագա ընթացքի հետ կապված աշխատանքներ, ինչպես նաև մասնակցել եմ շահագրգիռ պետական մարմիններում կամ կազմակերպություններում դրանց քննարկումներին.

8) մասնակցել եմ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և նրան ենթակա պետական մարմինների իրավասությանը վերապահված բնագավառներում օրենսդրական դաշտի կատարելագործման և բարեփոխման աշխատանքներին:

*Հարգանքով՝*

***Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի փորձագետ*** ***Ա. Ղազարյան***

*Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները*

Գնահատում եմ ____________

***Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի պետի պժն*** ***Վ. Պետրոսյան***

***29.01.2025թ.***